

Որակի հոշակագիր Կապ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Կապ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ anahit_nersisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն կապի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ ուղարկված հեռագրերի քանակը, այդ թվում ներհանրապետական, միջազգային, որից ԱՊՀ երկրներ, -միջքաղաքային և միջազգային ելից ավտոմատ կանչերի քանակը, որից ավարտվել են խոսակցությամբ -միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը, որից իրականացվել են միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցություններ, այդ թվում՝ միջքաղաքային և միջազգային, որից ԱՊՀ երկրներ, -միջազգային հեռախոսային խոսակցությունների միջին տևողությունը, -միջքաղաքային հեռախոսային խոսակցությունների միջին տևողությունը,</p> <p>-բոլոր տեսակի հեռագրական կապուղիների քանակ, որից վարձակալությամբ տրված,</p> <p>-հեռագրական կապերի քանակը, որից հաղորդակցությունների կոմուտացիայի համակարգով (ՀԿ), կապուղիների մոնտաժված ունակությունը,</p> <p>-հեռախոսային կայանների (մոնտաժված և զբաղված) քանակը, դրանց ունակությունը, արբանյակային կապի կայանների քանակը, բջջային հեռախոսակապի կայանների քանակը, հիմնական հեռախոսային ապարատների քանակը ըստ քաղաք Երևանի և ՀՀ մարզերի, որից բնակարանային տաքսաֆոնների քանակը, ինտերնետ հասանելիության ծառայության բաժանորդների քանակը, որից բջջային հեռախոսակապով, բջջային հեռախոսակապի ակտիվ բաժանորդների քանակը, բջջային հեռախոսակապի</p>

		<p>խոսակցությունների քանակը, դրանց միջին տևողությունը, օդային գծերի երկարությունը, խողովակների երկարությունը, մալուխների ընդհանուր երկարությունը, դրանից՝ օպտիկա-մանրաթելային, տեղադրված հեռախոսային գծերի քանակը տարվա վերջի դրությամբ, հայտնաբերված հեռախոսագծերի խափանումների քանակը, որոնք վերացվել են հսկվող ժամկետներում,</p> <p>- հեռուստատեսային կայանների և հաղորդակների քանակը, ՀՀ բնակչության ընդլայնվածությունը հեռուստաալիքներով (տոկոսներով), հեռուստածրագրերի հեռարձակումը, մալուխային հեռուստատեսության հաղորդակցության համակարգերին միացված բաժանորդների քանակը, ռադիոհեռարձակման հաղորդակների քանակը:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 20-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Կապի ցուցանիշները կիրառվում են կապի բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	<p>Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական և տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:</p>
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական	<p>Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:</p>

	տեղեկություններ (ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Կապն ընդգրկում է հեռուստառադիոձրագրերի կազմման և հեռարձակման և հեռահաղորդակցության ծառայությունները:</p> <p>Հեռուստառադիոձրագրերի կազմում և հեռարձակումը ներառում է հեռուստառադիոձրագրերի՝ նորությունների, ժամանցային ձրագրերի, բանավեճերի ու համանման այլ ձրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոձրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև տվյալների փոխանցումը, սովորաբար, երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:</p> <p>Հեռահաղորդակցության կապի գործունեությունը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Հեռուստառադիոհեռարձակումն էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածումն է հաղորդագծով (ներառյալ՝ մալուխային կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյունները հասանելի լինեն հասարակությանը:</p> <p>Հեռուստառադիոձրագիրը հեռարձակման համար նախատեսված, հեռուստառադիոընկերության կողմից նախապես կարգավորված հաջորդականությամբ հեռուստառադիոհաղորդումների, գովազդի և այլ նյութերի ամբողջությունն է:</p> <p>Հեռահաղորդակցական կապի ծառայություններն իրենց մեջ ներառում են ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը: Այդ գործողությունների իրականացման համար հաղորդիչ միջոցները կարող են հիմնվել մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների վրա: Այս ծառայությունները ուղղված են միայն տեղեկատվության փոխանցմանը և չեն առնչվում բովանդակային մասի ստեղծմանը: Հեռուստատեսային ազդանշանների փոխանցումը կարող է ներառել հեռուստաալիքով հեռարձակվող ամբողջական ձրագրի բաժանումը փաթեթների:</p> <p>Արբանյակային կապի ծառայությունները ներառում է ձայնի,</p>

տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը, հեռուստաալիքներով ու հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցերից ստացված ձայնա-, տեսաձրագրերի, տեքստերի փոխանցումն անմիջական օգտագործողին, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից:

Այստեղ դասակարգվող միավորների գործունեությունը չի ներառում ծրագրերի ստեղծման գործընթացը:

Հեռահաղորդակցության այլ ծառայություններն իրենց մեջ ներառում են արբանյակների դիտումը, կապուղիների հեռուստաչափումը, ռադարային կայանների ծառայությունները, արբանյակային վերջնակայանների (տերմինալների) և մեկ կամ ավելի վերգետնյա հաղորդակցման համակարգերի միջև անմիջական հեռահաղորդակցական կապը (հեռարձակումը և ընդունումը) արբանյակային համակարգի հետ ապահովող սպասարկման միջոցների շահագործումը, ոչ սեփական ISP կամ կառավարվող ISP ցանցի միջոցով ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը օգտվողին, հասարակական վայրերում ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը հեռախոսացանցի միջոցով, գործող հեռահաղորդակցական համակարգերի միջոցով այլ ծառայությունների մատուցումը, հեռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեությունը (ցանցի որոշակի ծավալի ծառայությունների գնումը և վերավաճառքը, առանց լրացուցիչ ծառայությունների մատուցման):

Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝

- հեռախոսային ցանցի,
- հեռագրական կապի,
- ինտերնետ հասանելիության,
- մալուխային հեռուստատեսային համակարգերի:

Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝

- բջջային հեռախոսակապի,
- ռադիոալիքային (փեյջինգային),
- շառավղային գործողության,
- ինտերնետ հասանելիության:

		<p>Հեռագրական կապուղիները հաշվառվում են ըստ մայրուղային և միջքաղաքային կապուղիների:</p> <p>Մայրուղային կապուղիներ են համարվում այն կապուղիները, որոնք ապահովում են հեռագրական կապը Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև, իսկ միջքաղաքային՝ այն կապուղիները, որոնք ապահովում են հեռագրական կապը մարզկենտրոնների և Երևանի միջև:</p> <p>Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապուղիների երկարությունն որոշվում է բոլոր տեղամասերի հաղորդման գծերի կտրվածքով՝ դրանց երկարության և տոնային հաճախականության կապուղիների (հաղորդման համակարգերի տարբեր սարքերի կիրառմամբ), ինչպես նաև հեռախոսային կապուղիների (որոնք առաջացել են լարերի ֆիզիկական գույգերով) քանակի արտադրյալների հանրագումարով: Միջքաղաքային հեռախոսային կապուղիների երկարության մեջ չի ներառվում կապի սիմետրիկ և կռակսալ մալուխային ու ռադիոռելեային գծերի ռեգերվի գծային, ինչպես նաև խմբակային տրակտերի պահեստային գծերի երկարությունը:</p> <p>Հեռախոսային կայանների և ենթակայանների ընդհանուր ունակությունը (մոնտաժված, զբաղված) ցուցանիշներում ներառվում են տեղակայված բոլոր բաժանորդային և հատուկ կոմպլեկտները, սարքավորումները, որոնք օգտագործվում են տաքսաֆոնների միացման համար, գերատեսչական կայանների էլքային և մուտքային միացնող գծերն ու գերատեսչական, տեղեկատվական, պատվերային ծառայություններին մշտական օգտագործման տրամադրված գծերը:</p> <p>Մոնտաժված և զբաղված ունակությունների մեջ հաշվի են առնվում նաև բոլոր ստուգիչ համարները, ինքնապատասխանիչների համարները, այն համարները, որոնք օգտագործվում են ծառայողական նպատակներով սրահներում, գծային-մալուխային ծառայություններում և այլն, աբոնենտային կոմպլեկտներում ներառված վերանորոգման ծառայության գծերը:</p> <p>Զբաղված ունակության մեջ ներառվում են ամրագրված հեռախոսային բաժանորդային համարները, որոնց համար գանձվում են բաժանորդային վճարներ:</p> <p>Հիմնական հեռախոսային ապարատների քանակը (առանց քարտֆոնների) ցուցանիշում արտացոլվում է հեռախոսային բաժանորդների քանակը:</p> <p>Քարտֆոնների քանակը առանձնացվում է ըստ ունիվերսալների և տեղականների:</p>
--	--	---

Ունիվերսալ են համարվում այն քարտֆոնները, որոնց միջոցով իրականացվում են ինչպես միջքաղաքային, այնպես էլ տեղական հեռախոսային խոսակցությունները:

Քաժանորդ կամ հաճախորդ համարվում է ցանկացած անձ, որն օգտագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ կամ դիմում է դրանց օգտագործման համար:

Ակտիվ բաժանորդային համար է համարվում հանրային շարժական բջջային կապի յուրաքանչյուր բաժանորդային համար, որի լիցքավորում) կամ որն օգտագործվել է էլքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայության ստացման համար, բացառությամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողների կողմից ուղարկվող զանգվածային բնույթ կրող գովազդային կամ տեղեկատվական հաղորդագրությունների (Bulk SMS):

Մալուխային հեռուստատեսության հաղորդակցության համակարգերին միացման բաժանորդների քանակը որոշվում է մալուխային հեռուստատեսության համակարգին միացված բնակարանների քանակով:

Ճյուղային ընդգրկունություն

Կապի գործունեության վիճակագրական դիտարկումները ներառում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ տեղեկատվություն և կապ բաժինը (J): Այս բաժնի կապի գործունեության հիմնական հատվածներն են՝ ռադիոձրագրերի և հեռուստաձրագրերի պատրաստումը և հեռարձակումը և հեռակաղորդակցության ծառայությունները:

Հեռուստառադիոձրագրերի կազմում և հեռարձակում հատվածը ներառում է հեռուստառադիոձրագրերի՝ նորությունների, ժամանցային ձրագրերի, բանավեճերի ու համանման այլ ձրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոձրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև տվյալների փոխանցումը, սովորաբար երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում: Հեռուստառադիոհեռարձակման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիաներ՝ էթերի, արբանյակային կապի, մալուխային ցանցի կամ ինտերնետի միջոցով: Այս հատվածը ներառում է նաև սահմանափակ լսարանի համար նախատեսված նորությունների, սպորտային մրցումների, կրթական, երիտասարդական և համանման

այլ ծրագրերից ամբողջական ծրագրի բնօրինակի կազմումը երրորդ կողմի համար՝ բաժանորդային կամ վճարային կարգով հեռարձակման նպատակով:

Ռադիոծրագրերի կազմումը և հեռարձակումը ներառում է ռադիոհեռարձակման ստուդիաների և ռադիոձայնային այլ կայանքների միջոցով ձայնային ազդանշանների տարածման հետ կապված գործունեություն՝ ռադիոծրագրերի հեռարձակում լայն լսարանի համար, որոշակի ալիքներով կամ բաժանորդների համար, ներառում է նաև ռադիոցանցերի շահագործում՝ ծրագրերի նախապատրաստում և հեռարձակում ռադիոալիքների, արբանյակային կապի, մալուխային ցանցի միջոցով, ռադիոհեռարձակում ինտերնետի (ինտերնետային ռադիոկայաններ) միջոցով և ռադիոհեռարձակման համակարգում տվյալների փոխանցում:

Հեռուստածրագրերի կազմում և հեռարձակումը ներառում է հեռուստաալիքների ամբողջական հեռուստածրագրերի կազմումը, գնված կինոնկարների (փաստավավերագրական ֆիլմերի և այլ) կամ տնտեսական միավորի կողմից ստեղծված ծրագրերի (տեղական նորություններ, լրահաղորդումներ և այլ) հատվածների համակցումը: Ավարտուն հեռուստածրագրերը կարող են հեռարձակվել կամ դրանց կազմող տնտեսվարող միավորի կողմից, կամ փոխանցվել երրորդ կողմին՝ մալուխային կամ արբանյակային ցանցերով տարածման համար: Հեռուստածրագրերը լինում են ընդհանուր կամ մասնագիտացված բնույթի՝ նորություններ, ժամանցային, կրթական, երիտասարդական ծրագրեր: Այստեղ ներառվում է լայն լսարանի համար նախատեսված, այնպես էլ միայն բաժանորդային կարգով տարածվող ծրագրերի կազմումը: Բաժանորդների պատվերով առաքվող տեսագրությունների և հեռուստածրագրերի կազմումը նույնպես դասակարգվում է այս դասում: Այս ենթադասում ներառվում է նաև տվյալների փոխանցումը, եթե այն համակցվում է հեռուստահեռարձակման հետ:

Հեռահաղորդակցություն հատվածը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը:

Հեռահաղորդակցությունը դասակարգվում է՝

- լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունների,
- անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունների,
- արբանյակային կապի ծառայությունների,
- հեռահաղորդակցական կապի այլ տեսակների:

		<p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><i>Հրապարակման խմբավորումներ</i></p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ հաղորդակցության տեսակների:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Հետազոտությունը գլխավորապես հիմնված է իրավաբանական անձանց համատարած դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսվարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 96% է:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Տվյալների հավաքման նպատակով կիրառվում է ներկայացուցչական ընտրանք: Ընտրանքային համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը:</p> <p>Ընտրանքը ստրատիֆիկացված է ըստ գործունեության տեսակների և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:</p> <p>Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:</p>
3.3	Ճշգրտության չափումները/	-

	չափելիությունը	
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE, հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալները որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Ամսական հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն): «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): Տվյալների բազաներ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6

		<p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, է/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի), Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/անհատ ձեռնարկատերերի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, ե/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի)</p>
5.3	Այլ տեղեկատվություն	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Կապի գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2019թ. փետրվարի 19-ի թիվ 07-Ն որոշում «Հեռագրական կապի և հեռախոսային ցանցի ծառայությունների մասին» Ձև 11-կապ (տարեկան), 2019թ. փետրվարի 19-ի 08-Ն որոշում «Հեռագրական կապի մասին» Ձև 31-կապ (տարեկան), 2019թ. փետրվարի 19-ի թիվ 09-Ն «Հեռախոսային կապի միջոցների և աշխատանքի որակի մասին» Ձև 42-կապ (տարեկան), 2018թ. օգոստոսի 28-ի 06-Ն որոշում «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման և ռադիոկապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 50-կապ վարչական (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևերը և լրացման հրահանգները հաստատելու մասին» հաստատված հավելված 2-ում:</p>

		<p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:</p>
<p>6. Լրացուցիչ փաստաթղթավորում</p>		
6.1		<p>Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ:</p>